Հովհաննես Թումանյան

Աստծո սպառնալիքը

Այժըմ ես կըգամ, ասում է աստված,
Օգնել աղքատին իր ծանըր կըռվում.
Չեմ թողնի նըրան հավիտյան լըքված,
Նա ինձ ապավեն կանչեց նեղ օրում:

Վա՛յ ձեզ, հըզորներ, որ իր խըրճիթում
Լացացրիք խեղճին, այրուն ու որբին,
Ու վես, անպատիժ՝ ասիք ձեր սըրտում
Ո՞վ է վերևից նայում մեր ճամփին:

Մի՞թե կարծում եք՝ չէր տեսնում, լըսում,

Նա, որ ստեղծեց և աչք, և ականջ.
Մի՞թե կարծում եք՝ ուժն էր պակասում,
Եթե համբերեց դատելուց առաջ:

Իմ աչքերն անթարթ ձեր ճամփի վըրա
Հըսկել եմ անքուն ես ձեր գործերին,

Էլ չեմ դանդաղիլ գալիս եմ ահա,
Ե՛ս, Տեր զորությանց և հուրն իմ ձեռին:

Ես հուր եմ ձրգում ճրնշվածի հոգին
Նորա համարձակ լեզվով ձեզ դատեմ,
Ես ուժ եմ տալիս աղքատի բազկին,

Նորա թիկունքին՝ գալիս եմ ձեր դեմ:

1902